ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2023/91

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2023 թ. N 91

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Եվրասիա **միջազգային համալսարան**» ՍՊԸ
Գործունեության հասցեն՝	ՀՀ, 0014, ք. Երևան, Ազատության 24/2,

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով 27.11.2018-27.11.2022

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023 թվականի հոկտեմբերի 16-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց **«Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ ԵՄՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	22 նոյեմբերի 2022 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝	17 մարտի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում՝	13-16 հունիսի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	22 սեպտեմբերի 2023թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝	09 հոկտեմբերի 2023 թ.

«Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար են գնահատվել **«Կառավարում ու վարչարարություն» և «Հետազոտություն և զարգացում»** չափանիշները:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԵՄՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում**

ԵՄՀ-ի ՄԿԾ-ները բխում են հաստատության առաքելությունից, համահունչ են ՈԱԾ-ին: Համալսարանում գործում է ՄԿԾ-ների մշակման և մշտադիտարկման կարգ: ԵՄՀ-ն վերանայել է կրթական ծրագրերի վերջնարդյունքները՝ փորձելով ապահովել նմանատիպ այլ կրթական ծրագրերի հետ համահունչությունը, ինչպես նաև դրանց համապատասխանությունը Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին: Բուհն աշխատանքներ է իրականացնում դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման, գնահատման քաղաքականության հստակեցման ուղղությամբ: Ակադեմիական շարժունության ապահովման նպատակով իրականացվել է համեմատական վերլուծություն և կրթական ծրագրերը կառուցվածքային և բովանդակային առումով համապատասխանեցվել են միջազգային պահանջներին:

Նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո քայլեր են ձեռնարկվել ԵՄՀ-ում գործող կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրման ուղղությամբ: Որոշակիորեն հստակեցվել են ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, վերանայվել է ՊԴ կազմի գնահատման կարգը, բարելավվել են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը:

Նախորդ հավատարմագրումից հետո ԵՄՀ-ում արդիականացվել են որոշ լաբորատորիաներ, բավականին թարմացվել է ռեսուրսային բազան, և այն կրում է շարունակական բնույթ, ընդհանուր առմամբ առկա է կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտ միջավայր, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները շարունակական են, ուսանողների և անձնակազմի համար առկա է գործունեության համապատասխան միջավայր՝
Բուհում գործող կրթական ծրագրերը, ՊԴ կազմն ու նյութատեխնիկական հագեցվածությունն ընդհանուր առմամբ ապահովում են արդի, գործնական հմտություններով, ՈԱԾ-ի և գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը: Այդ համապատասխանեցման ուղղությամբ բուհը շարունակական քայլեր է իրականացնում:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

Կառավարումն ապահովում է գործընթացների կայունությունը և պլանավորում է հետագա զարգացումները: Բուհում ներդրված է ռազմավարական պլանավորման գործընթաց՝ հիմնված գնահատման առանցքային ցուցանիշների վրա: Առկա են որոշակի խնդիրներ սահմանված գնահատման առանցքային ցուցիչների ճշգրտման, չափելիության և ռազմավարական նպատակներին փոխկապակցման ուղղությամբ:
Կառավարման գործընթացները դեռևս շահակիցների բավարար ներգրավվածությամբ և մասնակցայնությամբ չեն իրականացվում, և կոլեգիալ կառավարումը բավարար չափով արտահայտված չէ բուհում:
Բուհի կազմակերպական սխեման հստակորեն չի արտացոլում ուղղաձիգ և հորիզոնական կապերը: Ֆինասական միջոցների պլանավորումը չի փոխկապակցվում սահմանված ռազմավարական նպատակների իրականացմանը:
Դեռևս բացակայում են ինստիտուցիոնալ մոտեցումները՝ ռազմավարական պլանավորման և մշտադիտարկման նպատակով տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմների և համակարգերի ստեղծման համար:
Բուհի կազմակերպական սխեման հստակորեն չի արտացոլում ուղղաձիգ և հորիզոնական կապերը:
ՌԾ-ն կապված չէ հաստատության բյուջեի հետ, որից էլ առաջանում են ռիսկեր ՌԾ հետագա կատարման արդյունավետության համար: Ռիսկերի կառավարման մեխանիզմներ ներդրված չեն: Կառավարման գործընթացներում լիարժեք չի գործում որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը:
ԵՄՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, կարևորում է որակի ապահովման գործընթացները և դրանց կառավարման համար հատկացնում է նյութական և մարդկային ռեսուրսներ:
Բուհը քայլեր է ձեռնարկել ապահովելու ներքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում, նկատելի է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների և միջազգային ծրագրերի ազդեցությունը որակի ապահովման համակարգի վերափոխման վրա:

3. Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը:

Բուհում ուսանողների հավաքագրումն ու ընդունելությունն իրականացվում է հստակ ընթացակարգերով: Առկա են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, լրացուցիչ պարապմունքների հնարավորություններ և կարիերային նպաստող ծառայություններ: Կանոնակարգված են վարչական անձնակազմին դիմելու գործընթացները:

Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչը լավ արտահայտված չէ, և ուսանողներին հետազոտահենք կրթություն տրամադրելու մեխանիզմները դեռևս ինստիտուցիոնալ բնույթ չեն կրում՝ հիմնականում հետազոտական բաղադրիչն արտացոլելով ավարտական աշխատանքների իրականացմամբ: Կատարված հետազոտությունները չեն նպաստում կրթական գործընթացին: Դասախոսական կազմի ներգրավվածությունը հետազոտական գործընթացներում ոչ բավարար մակարդակի վրա է:

Միջազգայնացման ուղղությամբ իրականացված բավականին ակտիվ քայլերը հնարավորություն են ստեղծել բուհի զարգացման և առաջխաղացման համար՝ իրենց ազդեցությունն ունենալով բուհի բոլոր գործընթացներում:

Բուհը սահմանել է միջազգայնացման և արտաքին կապերի հաստատման քաղաքականություն և մոտեցումներ, շարունակաբար զարգացնում է համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների ու կառույցների հետ: Խրախուսվում է անձնակազմի և ուսանողների շարժունությունը: Բուհի կողմից քայլեր են ձեռնարկվում օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

ԵՄՀ-ում առկա են հաշվետվողականության արտաքին և ներքին համապատասխան համակարգեր, գործում են հետադարձ կապի կայուն մեխանիզմներ: Բուհը շարունակաբար քայլեր է իրականացնում հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման ուղղությամբ: Հասարակության տարբեր շերտերի համար կազմակերպվում են միջոցառումներ և դասընթացներ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում ու վարչարարություն» և «Հետազոտություն և զարգացում»** չափանիշներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - ՊԴ կազմի կայունության ապահովմանը, սկսնակ դասախոսների ներգրավման և աջակցման մեխանիզմների ներդրմանը,
   - Համալսարանի կառավարման վրա որակի ապահովման համակարգի ազդեցության բարձրացմանը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը,
   - դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականության ներդմանը, ապահովելով այդ մեթոդների փոխկապակցվածությունը ՄԿԾ-ների վերջնարդյունքների հետ,
   - կամընտրական դասընթացների բաշխման և դրանց ընտրության մեխանիզմների անկատարությունը,
   - կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման գործընթացներում շահակիցների ամբողջական շրջանակի ներգրավմանը,

- կողմից հավաքագրված տվյալների համակողմանի և ամբողջական վերլուծության գործիքակազմի բարելավման:

4. Կազմակերպել ԵՄՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԵՄՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ. դեկտեմբերի 26
ք.Երևան